

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՄԱՅՐ ԱԹՈՒՍՈՒՐԷ ԷՋՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH  
CATHOLICOS  
OF ALL ARMENIANS  
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ»  
ԱՐԵԱՎԱՆՄԱՐԻ ԴԵԿԱԿԱՐ ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻՆ, «ԱՐՄԵՆԻԱ»  
ԱՌԱԳԱՍՏԱՆԱԿԻ ՆԱԿԱՊԵՏ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ  
ԱՌԱԳԱՍՏԱՆԱԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով Մեր օրհնությունն եք հղում ձեզ՝ «Արմենիա» առաքաստանավով շուրջերկրյա ուղևորության առաջին փուլի բարեհաջող ավարտի առիթով:

Ձեր քաջարի և ազնիվ հանձնառության շնորհիվ հայկական առաքաստանավն այսօր նավարկում է ծովերով և օվկիանոսներով՝ ի լուր աշխարհին վերածայնելով մեր երկրի և հայոց պատմության մասին: Կտրելով հազարավոր կիլոմետրեր՝ դուք հատեցիք Ատլանտյան օվկիանոսը՝ ձեր ներդրումը բերելով աշխարհասփյուռ մեր ժողովրդի համախմբման և միասնականության ամրապնդման նվիրական գործում: Յուրաքանչյուր հայորդի հպարտությամբ է լցվում, երբ տեսնում է օտար ջրերում հայկական առաքաստանավի վրա ծածանվող հայոց եռագույնը, և ամենուր, ի նշան երախտագիտության ու սիրո, դիմավորում ձեզ մեծագույն ջերմությամբ և կարոտով:

Մեր շնորհավորանքը և բարձր գնահատանքն ենք բերում ձեզ՝ ձեր սխրալի և գովարժան նախաձեռնության համար:

Աղոթքով ձեզ հետ ենք և մաղթում ենք, որ Տիրոջ օգնականությամբ ու օրհնությամբ, անփորձանք և անվտանգ բարի ավարտի առաջնորդեք շուրջերկրյա ձեր նավարկությունը և բարեհաջող վերադառնաք Հայրենիք:

Թող «Արմենիա» առաքաստանավի հետ հայրենյաց սերն ու կարոտը հեղվի աշխարհասփյուռ հայության օջախներին և մեր Հայրենիքին՝ Հայաստանին ու Արցախին:

*Շնորհք, սէր և ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. Ամէն:*

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳՈՍ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ